Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
դեկտեմբերի 27-ի N 2082-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 350.1-ին հոդվածի 2-րդ մասին համապատասխան հարկային մարմնի կողմից բանկային հաշվի քաղվածքն ստանալու վերաբերյալ հարկ վճարողին հարցման (այսուհետ՝ հարցում) և հարկ վճարողի կողմից բանկային հաշվի քաղվածքի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Հարցումը կատարվում է հարկային հսկողության շրջանակներում՝ համաձայն սույն հավելվածով սահմանված ձևի՝ հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին ստորագրությամբ առձեռն հանձնելու եղանակով: Հարցումը համարվում է հարկ վճարողի կողմից ստացված հարցումը հանձնելու օրը:

3. Հարկ վճարողի կողմից հարցումը ստացված համարվելու օրվան հաջորդող երեք, իսկ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող հարկ վճարող ֆիզիկական անձանց կողմից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում հարցմամբ նշված հարկային հսկողության ժամանակահատվածի համար առևտրային բանկի հաստատած բանկային հաշվի քաղվածքը սույն կարգով սահմանված որևէ եղանակով հարկային մարմին չներկայացվելու դեպքում, հարցումը կատարվում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու եղանակով: Հարկ վճարողը հարցման մասին իրազեկվում է նաև վերջինիս՝ հարկային մարմնում հայտնի էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու միջոցով:

4. Հարկ վճարողի (գործադիր մարմնի ղեկավարի) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից հարցումը ստորագրելուց և ստանալուց հրաժարվելու դեպքում այդ մասին հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը նշում է կատարում հարցման վրա, և այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը հարցումը կատարվում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու եղանակով: Հարկ վճարողը հարցման մասին իրազեկվում է նաև վերջինիս՝ հարկային մարմնում հայտնի էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու միջոցով:

5. Հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրված հարցումը համարվում է հարկ վճարողի կողմից ստացված հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու հաջորդ օրը:

6. Հարցմամբ նշված հարկային հսկողության ժամանակահատվածի համար առևտրային բանկի հաստատած բանկային հաշվի քաղվածքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած իրավական ակտերով նախատեսված տեղեկություններ պարունակող փաստաթուղթը, իսկ ոչ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում բացված հաշիվների դեպքում՝ այդ ձևաչափին համապատասխան տեղեկություններ պարունակող փաստաթուղթը (այսուհետ՝ քաղվածք), հարկ վճարողը սույն կարգի 5-րդ կետով սահմանված ժամկետին հաջորդող երեք, իսկ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող հարկ վճարող ֆիզիկական անձը՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հարկային մարմին: Մեկից ավելի բանկային հաշիվների առկայության դեպքում հարկային մարմին են ներկայացվում բոլոր բանկային հաշիվների (այդ թվում՝ ոչ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում բացված հաշիվների) քաղվածքները՝ հարցմամբ նշված հարկային հսկողության ժամանակահատվածի համար: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտով սահմանվող անհատ ձեռնարկատեր կամ նոտար

չհանդիսացող ֆիզիկական անձ հարկ վճարողների մասով բանկային հաշվի քաղվածքները գործարքի կողմ հանդիսացող երրորդ անձանց վերաբերյալ տեղեկություններ չեն ներառում:

7. Հարկ վճարողի պատճառաբանված դիմումի հիման վրա սույն կարգի 6-րդ կետով սահմանված՝ քաղվածքի ներկայացման ժամկետները հարկային մարմնի կողմից կարող են երկարաձգվել հարկ վճարողի դիմումով առաջարկված ժամկետով, բայց ոչ ավելի, քան օրենսգրքով սահմանված հարկային հսկողության ժամկետների ավարտը:

8. Առևտրային բանկի կողմից էլեկտրոնային եղանակով տրամադրված և հաստատված քաղվածքը հարկ վճարողի կողմից հարկային մարմին է ներկայացվում էլեկտրոնային եղանակով՝ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու կամ հարկային մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, և քաղվածքը հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու օրը կամ հարկային մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկելու օրը:

9. Առևտրային բանկի կողմից թղթային եղանակով տրամադրված և հաստատված քաղվածքը հարկային մարմին է ներկայացվում առձեռն կամ փոստային կապի միջոցով, և քաղվածքը հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում փոստային կապի միջոցով ներկայացվելու դեպքում՝ նամակի ծրարի վրա փոստային բաժանմունքի կողմից դրված՝ ընդունման ամսաթիվը հավաստող օրացուցային կնիքի արտատիպը, իսկ առձեռն տրամադրելու դեպքում՝ այն ստորագրությամբ հարկային հսկողություն իրականացնող անձին հանձնելու օրը կամ հարկային մարմնում մուտքագրվելու օրը:

Ձև

ՀԱՐՑՈՒՄ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ հարկային հսկողություն իրականացնող ստորաբաժանման անվանումը՝ _____
2.	Հարկային հսկողության ենթարկվող հարկ վճարողի լրիվ անվանումը, ՀՎՀՀ-ն, անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող հարկ վճարող ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները կամ հանրային ծառայության համարանիշը՝ _____ _____
3.	Հարկային հսկողության տեսակը՝ _____
4.	Հարկային հսկողության հիմք հանդիսացող փաստաթղթի ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և համարը՝ _____
5.	Հարկային հսկողության ժամանակահատվածը՝ ___ _____ 20 թ. - ___ _____ 20 թ.

6. Սույն հարցումն ուղարկվում է՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 350.1-ին հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմնի կողմից հարկ վճարողի բանկային հաշվի քաղվածքն ստանալու նպատակով:

7. Սույն ձևի 5-րդ կետում նշված հարկային հսկողության ժամանակահատվածի համար առևտրային բանկի հաստատած բանկային հաշվի քաղվածքը ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած իրավական ակտերով նախատեսված տեղեկություններ պարունակող փաստաթուղթը, պետք է ներկայացվի հարկային մարմին՝ սույն հարցումն ստանալուն հաջորդող երեք, իսկ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող հարկ վճարող ֆիզիկական անձանց կողմից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8. Առևտրային բանկի կողմից էլեկտրոնային եղանակով հաստատված և ստացված քաղվածքը հարկային մարմին պետք է ներկայացվի էլեկտրոնային եղանակով՝ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու կամ հարկային մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, իսկ թղթային եղանակով հաստատված և ստացված քաղվածքը՝ առձեռն կամ փոստային կապի միջոցով:

9. Մեկից ավելի բանկային հաշիվների առկայության դեպքում հարկային մարմին են ներկայացվում բոլոր բանկային հաշիվների (այդ թվում՝ ոչ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում բացված հաշիվների) քաղվածքները (բնօրինակները)՝ հարցմամբ նշված հարկային հսկողության ժամանակահատվածի համար:

10. Նշված ժամկետում բանկային հաշվի քաղվածքը չտրամադրվելու դեպքում հարկային մարմինը բանկային հաշվի քաղվածքն ստանում է դատարանի որոշման հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Հարկային հսկողություն իրականացնող
պաշտոնատար անձ (անձինք).

_____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ